«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Էկոտուրիզմը «Խոսրովի անտառ» պետական արգելոցում

Զեկուցող՝ Լիլյա Թորոսյան

«Էկոտուրիզմը Հայաստանում» համաժողով
Հայաստանի ամերիկյան համալսարան
14 ապրիլի, 2018թ.

«Խոսրովի անտառ» պետական արգելոցը հիմնադրվել է 1958 թ-ի սեպտեմբերի 13-ին:

Գտնվում է Արարատի մարզում, Արարատյան դաշտի հարևանությամբ՝ Գեղամա լեռնաշղթայի լեռնաբազուկների, Երանոսի և Երախի լեռների վրա:

Տարածքը՝ 23213.5 հա

«Խոսրովի անտառ» պետական արգելոցը ներկայումս բաժանված է չորս տեղամասերի՝

- Գառնի տեղամաս (4253հա),
- Կաքավաբերդ տեղամաս (4745հա),
- Խոսրով տեղամաս (6860.8հա),
- Խաչաձոր տեղամաս (7354.7հա)



«Խոսրովի անտառ» պետական արգելոցում հիմնական աշխատանքները տարվում են 3 ուղղությամբ

Պահպանություն

Գիտական հետազոտություններ

Էկոզբոսաշրջություն



Վահագնի ջրվեժ

Սովորական հողմավար բազե

Արգելոցն ունի ամենահարուստ կենսաբազմազանությունը ոչ միայն Հայաստանում, այլև ողջ Կովկասյան էկոտարածաշրջանում:

Բուսական աշխարհ

- Արգելոցում աճում է անոթավոր բույսերի 1849 տեսակ, այսինքն՝ Հայաստանի ֆլորայի (3800 տեսակներ) մոտ կեսը, իսկ Կովկասի ֆլորայի (6000 տեսակ) մոտ 1/3

- Ավելի քան 80 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում,

- 24 տեսակ համարվում են էնդեմիկ:

Կենդանական աշխարհ

■ կաթնասուններ՝ 44 տեսակ, այդ թվում Հայաստանի Կարմիր գրքում գրանցված կովկասյան ընձառյուծը, բեզոարյան այծը, գորշ արջը և այլն,
■ թռչուններ՝ 192 տեսակ, այդ թվում Հայաստանի Կարմիր գրքում գրանցված սև և սպիտակագլուխ անգղերը, կասպիական հնդկահավը, կարմրառոտ բազեն և այլն,
■ սողուններ՝ 33 տեսակ, որից 10-ը ՝ Հայաստանի Կարմիր գրքում գրանցված,
■ երկկենցաղներ՝ 5 տեսակ,
■ ձկներ՝ 9 տեսակ:

Կովկասյան ընձառյուծ
Caucasian leopard (Panthera pardus ciscaucasica)
© WWF-Armenia

Բեզոարյան այծ / Bezoar goat *(Capra aegagrus)*
© WWF-Armenia / A. Malkhasyan

Սիրիական զոր? արջ
Syrian brown bear (Ursus arctos syriacus)
© WWF-Armenia

Քարարծիվ / Golden eagle
© ԲՀՀ Հայաստան / Ա. Մալխասյան
© WWF-Armenia / A. Malkhasyan

Մալխասյան իժ / Montivipera raddei
© ԲՀՀ Հայաստան / Ա. Մալխասյան
© WWF-Armenia / A. Malkhasyan

Միջերկրածովային կրեա / Testudo graeca
© ԲՀՀ Հայաստան / Ա. Մալխասյան
© WWF-Armenia / A. Malkhasyan

Արգելոցի առանձնահատկություններից է պատմական և մշակութային հարուստ ժառանգությունը:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում հաշվառված է ընդհանուր թվով 312 հուշարձան, որից

- 29-ը՝ վանքեր, եկեղեցիներ, մատուռներ,
- 19-ը՝ բնակատեղի,
- 2-ը՝ ամրոց,
- 222-ը՝ խաչքարեր և տապանաքարեր,
- 40-ը՝ այլ բնույթի հիմնականում միջնադարյան հուշարձաններ, որոնք մեծամասամբ կիսավեր վիճակում են:

Վանստան (եկեղեցու ավերակներ)



Խաչքարեր (Աղջոց վանք)

Հավուց Թառ վանական համալիր

Սբ. Ստեփանոս եկեղեցի

Գեղի բերդ (Կաքավաբերդ)

Քարերի սիմֆոնիա

Ինքնատիպ բնությունը, պատմաճարտարապետական հուշարձանները, բուսական ու կենդանական աշխարհների մեծ բազմազանությունը հնարավորություն են ստեղծում զբոսաշրջային հետևյալ ձևերի իրականացման համար:

Էկոզբոսաշրջություն

Գիտաճանաչողական զբոսաշրջություն

Պատմամշակութային զբոսաշրջություն

Ներկայումս արգելոցի տարածքում առաջարկվում են էկոտուրիստական 9 երթուղիներ



6 երթուղիներն ընդգրկում են *Գառնի* և *Կաքավաբերդ* տեղամասերի տեսարժան վայրերը:
Մեկնարկային կետը Գառնու ուղեփակոցի հարևանությամբ գտնվող այցելուների կենտրոնն է:

Գեղի բերդ (Կաքավաբերդ) ↕

Մյուս 3 երթուղիները գտնվում են *Խոսրով* և *Խաչաձոր* տեղամասերում և սկսվում են Վեդի քաղաքում գտնվող արգելոցի վարչական շենքից:



Կենդանիների դիտարկման տուրեր

Արգելոցի տարածքում հիանալի հնարավորություն կա հանդիպելու արգելոցում բնակվող կենդանիների մեծ մասին (գորշ արջ, բեզոարյան այծ, կովկասյան հովազ, վայրի վարազ, լուսան և այլն)

Թռչնադիտարկման տուրեր

Արգելոցի տարածքում կան հրաշալի թռչնադիտման վայրեր, որտեղ կարելի է տեսնել տարբեր տեսակի թռչուններ (սև և սպիտակագլուխ անգղեր, գառնանգղ և այլն):

■ «Խոսրովի անտառ» պետական արգելոց մուտք գործելու համար հարկավոր է նախապես հայտ ուղարկել և կատարել ամրագրում:

■ Արգելոցի տարածք մուտք գործելը վճարովի է:

(ՀՀ քաղաքացի այցելուներ-2000 անձ/ ՀՀԴ
Օտարերկրացի այցելուներ-4000 անձ/ ՀՀԴ)

■ Այցելությունները թույլատրելի են ինչպես տեղացի, այնպես էլ օտարերկրացի տուրիստների համար:

■ Տուրերը կարող են լինել անհատական և փոքր խմբերով:

■ Երթուղիներն իրականացվում են հետիոտն, ձիերով կամ ամենագնացով՝ ուղեկցորդի ուղեկցությամբ:

(Ուղեկցորդի ներկայությունը պարտադիր է (10 000 ՀՀԴ 1 խմբի համար)

■ Ձիեր և ամենագնացներ կարելի է վարձակալել արգելոցի երկու այցելուների կենտրոններում:

Զբոսաշրջային ենթակառուցվածքներ

Արգելոցն ունի երկու այցելուների կենտրոն

Գառնու այցելուների կենտրոն

Ծառայություններ

- տեղեկատվական ծառայություն
- հետիոտն և ձիով արշավներ
- անհրաժեշտ գույքի վարձակալություն
- վրանատեղ
- վայրի կենդանական և բուսական աշխարհի դիտում,
- թռչնադիտում,
- պատմամշակութային վայրերի այցելություններ և այլն:

Գառնու այցելուների
կենտրոնի սրահները

Վեդու այցելուների կենտրոն

Ծառայություններ

- տեղեկատվական ծառայություն
- հետիոտն և ձիով արշավներ
- անհրաժեշտ գույքի վարձակալություն
- վրանատեղ
- գիշերակացի հնարավորություն
- անվճար թանգարան
- վայրի կենդանական և բուսական աշխարհի դիտում,
- թռչնադիտում,
- պատմամշակութային վայրերի այցելություններ և այլն:

Ծառայություններ

- Այցելուների կենտրոններին հարակից հանգստի գոտիներում տաղավարների տրամադրում

- Ֆորդ տրանզիտ մեքենայի վարձակալություն

Էկոտուրիստական գույքի վարձակալում



2-6 տեղանոց վրանների վարձույթ (հատ/օր)	1000 ՀՀ դրամ
Փչովի ներքնակ (հատ/օր)	2000 ՀՀ դրամ
Ուսապարկ և լապտերներ (հատ/օր)	1000 ՀՀ դրամ
Քայլարշավային ձեռնափայտեր (զույգ/օր)	1000 ՀՀ դրամ
Ձիարշավի համար նախատեսված սաղավարտ (հատ/օր)	1500 ՀՀ դրամ
Ձիարշավի համար նախատեսված սոնապաններ (զույգ/օր)	1000 ՀՀ դրամ
Բարձր անցանելիության ավտոմեքենայի վարձույթ (1 կմ)	1000 ՀՀ դրամ

ԹԱՆԳԱՐԱՆ

Արգելոցի՝ Վեդի քաղաքում տեղակայված վարչական շենքում գտնվում է անվճար թանգարանը, որտեղ ներկայացված են արգելոցի ֆլորայի և ֆաունայի նմուշ-օրինակներ:

Թանգարանում ներկայացված են նաև «Գոռավանի ավազուտներ» և «Խոր Վիրապ» պետական արգելավայրերը իրենց բնորոշ բուսատեսակներով և կենդանատեսակներով:

■Թանգարանի բուսաբանական բաժնում առկա են 60 տեսակից ավել բույսերի հերբարիումներ:
■ Ողնաշարավոր կենդանիների 88 տեսակ, որոնցում ներկայացված են կաթնասունների՝ 25, թռչունների ՝ 35, սողունների ՝ 21, երկկենցաղների՝ 2, ձկների 5 տեսակ:

Թանգարանում երկար տարիների ընթացքում հավաքվել և պահպանվում է հարուստ բուսաբանական հավաքածու:

- 2016 թ. «Խոսրովի անտառ» պետական արգելոց է այցելել 635 զբոսաշրջիկ:
- 2017թ-ին արգելոց է այցելել 802 զբոսաշրջիկ:



COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

European Diploma of Protected Areas

awarded by the Committee of Ministers
of the Council of Europe
to the Khosrov Forest Reserve (Armenia)

European Diploma
of Protected Areas

Whereas it is desirable
to promote close co-operation
between member countries of the Council of Europe,
with a view to conserving and enhancing
the natural environment of the people of Europe,
for the material and spiritual well-being
of present and future generations;

Whereas the Committee of Ministers
has instituted to that effect a European Diploma
to place, under the sponsorship
of the Council of Europe
certain protected landscapes,
reserves and natural features
of European interest;

I, Gabriella Battaini-Dragoni,

Deputy Secretary General of the Council of Europe,
hereby certify that:

The Committee of Ministers,

Having regard to Resolution (65) 6
instituting the European Diploma,
as amended by Resolution CM/ResDip(2008)1
on the revised regulations for the
European Diploma of Protected Areas;

Having taken note of the proposal made by the Standing
Committee of the Convention on the Conservation of European
Wildlife and Natural Habitats (Bern Convention);

Having noted further the consent of the Government of Armenia;

Having deliberated thereon;

Has in its Resolution CM/ResDip(2013)2 solemnly awarded
the present diploma to the Khosrov Forest Reserve Administration;

Has thereby placed the said area under the
sponsorship of the Council of Europe until 10 July 2018,

In witness whereof I have hereto appended my signature
and affixed the seal of the Council of Europe,

Done at the seat of the Council of Europe
this 26 August 2013.

Signed
Deputy Secretary General

2013թ. Օգոստոսի 26-ին «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ին շնորհվել է Պահպանվող տարածքների Եվրոպական դիպլոմ՝ գիտակցելով արգելոցի կարևորությունը:

Էկոտուրիզմն արգելոցում ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով պետական արգելոցի էկոտուրիզմի ստորաբաժանման և տուր օպերատորների հետ համատեղ տրամադրվում է հանրությանը «Խոսրովի անտառ » պետական արգելոցի տարածքների գրավչության, բնության և պատմամշակութային արժեքների, ինչպես նաև էկոերթուղիների վերաբերյալ տեղեկատվություն:

«ԽՈՍՐՈՎԻ ԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑ (ՊՈԱԿ)

Հայաստան, Արարատի մարզ, Վեղի
Կասյան փող., 79 շենք

+374 234 2 13 52
+374 77 58 31 43

www.khosrovreserve.am

khosrovreserve@gmail.com

Khosrov Forest State Reserve/ "Խոսրովի անտառ"
պետական արգելոց

@khosrov.reserve